ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունվարի 2026թ. N ՄՈ-08-Ա

ք. Արմավիր

ՕՖԵԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ և 37.3-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորած մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 26-ին կայացած նիստի N 517 արձանագրությունը.

որոշում եմ՝

1. Օֆելյա Հարությունյանին նշանակել «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, 2026 թվականի հունվարի 12-ից նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 1 տարի փորձաշրջանով՝ համաձայն հավելվածի:
2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Ղորղանյանին:
3. Փորձաշրջանի ղեկավարին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորած մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ